

Համայնքի հսկիչ կետերում, բացառությամբ այն կետերի, որոնք գտնվում են նշանակման վայրում, երրորդ երկրներից ներկրվող բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների առողջության ստուգումներ իրականացնելու նվազագույն պայմանները սահմանող՝ Հանձնաժողովի 1998 թվականի ապրիլի 15-ի 98/22/ԵՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր, L 126, 28.04. 2008թ., էջ 0026 - 0028

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի՝ «Բույսերի եւ բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանց տարածման դեմ պաշտպանիչ միջոցների մասին» 1976թ.-ի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը¹, որը վերջին անգամ փոփոխվել է 98/2/ԵՀ² հրահանգով եւ, մասնավորապես, դրա 12(6) հոդվածի նախավերջին ենթապարբերությունը, քանի որ, եթե 77/93/ԵՏՀ հրահանգի V հավելվածի Բ մասում նշված երրորդ երկրներից ներկրվող բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների առողջության ստուգումների համար սահմանված միջոցառումները պետք է արդյունավետորեն իրականացվեն, ապա ներդաշնակեցված նվազագույն պայմաններ պետք է սահմանվեն հսկիչ կետերում, բացառությամբ այն կետերի, որոնք գտնվում են նշանակման վայրում, այս ստուգումներն իրականացնելու համար,

քանի որ, բույսերի առողջության նման ստուգումներ իրականացնելու համար սահմանված նվազագույն պայմաններում պետք է հաշվի առնել տեխնիկական պահանջները, որոնք կիրառելի են 77/93/ԵՏՀ հրահանգի 2(1)(է) հոդվածում նշված պետական մարմինների համար, որոնք պատասխանատու են վերոհիշյալ հսկիչ կետերի, ինչպես նաեւ հարմարությունների, գործիքների եւ

¹ ՊՏ L 26, 31. 01. 1977թ., էջ 20:

² 2) ՊՏ L 15, 21. 01. 1998թ., էջ 34:

սարքավորումների համար կիրառելի դրույթների համար՝ հնարավորություն տալով վերոնշյալ պատասխանատու պետական մարմիններին իրականացնելու բույսերի առողջության համար անհրաժեշտ ստուգումները,

եւ քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 77/93/ԵՏՀ հրահանգի 12(6) հոդվածի չորրորդ ենթապարբերության մեջ նշված բույսերի առողջության ստուգումները, որոնք ուղղված են հիշյալ հրահանգի V հավելվածի Բ կետում թվարկված եւ երրորդ երկրներից ներկրվող բույսերին, բուսական արտադրանքին եւ մյուս առարկաներին, եւ որոնք իրականացվում են հսկիչ կետերում, բացառությամբ այն կետերի, որոնք գտնվում են նշանակման վայրում, բավարարեն սույն Հրահանգի հավելվածով սահմանված առնվազն նվազագույն պայմանները:

Հոդված 2

Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը 1998 թվականի հոկտեմբերի 1-ին: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետությունները ձեռնարկեն այս միջոցները, դրանք պարունակելու են սույն Հրահանգին արված հղում կամ դրանց կցվելու է նման հղում՝ պաշտոնական հրապարակման --ժամանակ: Նման հղում կատարելու ընթացակարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

Անդամ պետությունները անմիջապես Հանձնաժողով են ներկայացնում ներպետական օրենքների բոլոր դրույթները, որոնք ընդունվում են սույն

Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի ապրիլի 15-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ֆրանց ՖիՇԼԵՐ

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ

Համայնքի հսկիչ կետերում, բացառությամբ այն կետերի, որոնք գտնվում են նշանակման վայրում, երրորդ երկրներից ներկրվող բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների առողջության ստուգումներ իրականացնելու նվազագույն պայմանները

1. 77/93/ԵՏՀ հրահանգի 2(1)(է) հոդվածում նշված պատասխանատու պետական մարմինները, որոնք պատասխանատու են սույն Հրահանգի 1-ին հոդվածում նշված հսկիչ կետերի համար.

- իրավասու են իրականացնելու իրենց պարտականությունները,

- ունեն տեխնիկական կարողություններ՝ հատկապես վնասակար օրգանիզմները հայտնաբերելու եւ փաստորոշելու համար,

- ունեն վնասակար օրգանիզմների նույնականացման փորձ, կամ նրանց հասանելի է նման փորձագիտությունը,

- ունեն համապատասխան վարչական, զննման եւ վերլուծության հարմարությունների, գործիքների եւ սարքավորումների օգտագործման հնարավորություն, ինչպես սահմանված է 3-րդ պարբերությամբ,

- ունեն այնպիսի շինություններ մուտք գործելու իրավունք, որոնք նախատեսված են բեռների պատշաճ պահեստավորման եւ կարանտինի, անհրաժեշտության դեպքում՝ ամբողջ արգելված բեռի կամ դրա մի մասի ոչնչացման (կամ այլ համապատասխան փաստահանման) համար,

- նրանց մատչելի են.

ա) գրավոր եւ թարմացված ազգային զննման ուղեցույցներ, որոնք հիմնված են անդամ պետությունների ներքին օրենսդրության վրա, ինչպես սահմանված է Համայնքի օրենսդրության շրջանակում,

բ) Համայնքի թարմացված ուղեցույցների հավաքածու փորձագետների եւ ազգային տեսուչների համար, ինչպես նշված է 77/93/ԵՏՀ հրահանգի 19ա(6) հոդվածում,

գ) Համայնքի՝ բույսերի առողջության վերաբերյալ թարմացված օրենսդրություն

դ) թարմացված ցանկ, որում ներառված են այն մասնագիտացված լաբորատորիաների հասցեները եւ հեռախոսահամարները, որոնք պաշտոնապես հաստատվել են վնասակար օրգանիզմների առկայությունը պարզելու եւ վնասակար օրգանիզմներին նույնականացնելու նպատակով ստուգումներ իրականացնելու համար: Անհրաժեշտ է կիրառել համապատասխան ընթացակարգ՝ լաբորատորիա տեղափոխելուց հետո եւ վերլուծության ընթացքում նմուշի (նմուշների) ամբողջականությունը եւ անվտանգությունն ապահովելու նպատակով,

ե) թարմ տեղեկություններ երրորդ երկրներից ներկրվող բույսեր, բուսական արտադրանք կամ այլ առարկաներ պարունակող բեռների մասին, որոնք ենթարկվել են.

- պաշտոնական արգելման,

- մասնագիտացված լաբորատորիաներում պաշտոնական վերլուծության՝ իրենց արդյունքների հետ մեկտեղ,

առնվազն պայմանով, որ այդ տեղեկությունները համապատասխանում են տվյալ վայրում իրականացվող բույսերի առողջության ստուգումներին,

հնարավորինս արագ հարմարեցնել բույսերի առողջության ստուգումների հաստատված ծրագիրն այնպես, որ այն բավարարի փաստացի կարիքները՝ բույսերի առողջության հետ կապված ռիսկերի կամ բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների քանակի/ծավալի ցանկացած փոփոխության լույսի ներքո, որն առաջարկվել է ներդնել 1-ին հոդվածում նշված հսկիչ կետերում:

2. 77/93/ԵՏՀ հրահանգի 2(1)(թ) հոդվածի երկրորդ ենթապարբերության մեջ նշված պետական ծառայողները եւ որակավորված ներկայացուցիչները, որոնք փաստացի պատասխանատու են սույն Հրահանգի 1-ին հոդվածում նշված հսկիչ կետերում զննումներ իրականացնելու համար, ունեն.

- տեխնիկական կարողություններ, հատկապես վնասակար օրգանիզմների հայտնաբերման համար,

- վնասակար օրգանիզմների նույնականացման փորձ, կամ նրանց հասանելի է նման փորձագիտությունը,

որպես իրենց որակավորման մաս՝ համաձայն հիշյալ 2(1)(թ) հոդվածի երկրորդ ենթապարբերության, եւ նրանց անմիջականորեն հասանելի են լինելու առաջին պարբերության վեցերորդ պարբերությամբ նշված տեղեկությունները:

3. 1-ին պարբերության մեջ նշված հաստատությունները, գործիքները եւ սարքավորումները պետք է առնվազն ունենան.

ա) վարչական հարմարությունների առումով՝

- արագ հաղորդակցման համակարգ՝

- 77/93/ԵՏՀ հրահանգի 1(6) հոդվածում նշված պետական մարմնի հետ,

- 1-ին պարբերության մեջ նշված մասնագիտացված լաբորատորիաների հետ,

- մաքսային մարմինների հետ,

- Հանձնաժողովի հետ,

- այլ անդամ պետությունների հետ,

- փաստաթղթի կրկնօրինակման համակարգ.

բ) զննման հարմարությունների առումով՝

- զննման համար հարմար տարածքներ, անհրաժեշտության դեպքում,

- համապատասխան լուսավորություն,

- զննման համար նախատեսված սեղան (սեղաններ),

- սարքավորումներ, որոնք հարմար են՝

- ակնադիտական հետազոտության համար,

- բույսերի առողջության ստուգումների համար օգտագործված տարածքների եւ սարքավորումների ախտահանման համար,

- 1-ին պարբերության մեջ նշված մասնագիտացված լաբորատորիաներում հետագա հնարավոր ստուգումների համար նմուշների նախապատրաստման համար.

գ) բեռների նմուշառման հարմարությունների առումով՝

- համապատասխան նյութ՝ յուրաքանչյուր նմուշ առանձին նույնականացնելու եւ փաթեթավորելու համար,
- համապատասխան փաթեթանյութ՝ նմուշները 1-ին պարբերության մեջ նշված մասնագիտացված լաբորատորիաներ ուղարկելու համար,
- կնիքներ,
- պաշտոնական դրոշմակնիքներ,
- համապատասխան լուսավորություն: